ապրիլյան 11-ին հանրաքվեից:

interfax-ը հաղորդում է

Այազ Մութալիբովը պաշտպանում է միութենական պայմանագիրը

Ադրբեջանի պրեզիդենտ եւ հանրապետության կոմկուսի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Այազ Մութալիբովը հայտարարել է, որ անհրաժեշտ է պահպանել ադրբեջանական ինքնիշխան հանրապետությունը նոր Միության սահմաններում: Նա իր այս տեսակետը արտահայտեց Ադրբեջանի Գերագույն խորհրդի նիստում:

Խոսելով կենտրոնի եւ հանրապետությունների միջեւ լիազորությունների բաժանման մասին, Ա. Մութալիբովը նշեց, որ իր կարծիքով գտնվել է այդ խնդրի ճիշտ լուծումը, քանի որ սկզբից որոշված է, թե ինչպիսի լիազորություններով են օժտում Միությանը պայմանագրի մասնակիցները, իսկ հետո ինչպիսի լիազորություններ է իրագործում Միությունը հանրապետությունների հետ միասին:

Կարեւոր քայլեր են ձեռնարկվել նաեւ արտաքին գործերի բնագավառում: Նախատեսվում է, որ միութենական հանրապետությունները իրավունք կունենան Միության արտաքին գործերի նախարարության հետ մեկտեղ դիվանագիտական հարաբերություններ հաստատել ուրիշ երկրների հետ, հիմնել դեսպանատներ:

ԼՂԻՄ-Ի ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՔՎԵ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԼՂԻՄ-ի մարզային, շրջանային ու քաղաքային 6 խորհուրդներից 5-ի նախագահները հայտարարել են, թե մարտի 17-ի հանրաքվեն Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա խափանվում է: Մարտի 12-ին ընդունված որոշման մեջ դա հիմնավորվում է այն բանով, որ միութենական մարմինները չեն վճռել ինքնավար մարզի իշխանությունների սահմանադրական լիազորությունները ճանաչելու հարցը:

Հայտարարության հեղինակները գտնում են, որ Խ. Միությունը պահպանելու հարցով ԼՂԻՄ-ի բնակչության կարծիքին անդրադառնալ կարելի է միայն մարզի խորհրդային իշխանությունների լիազորությունները ճանաչելուց հետո:

Հայտարարության տակ չկա առավելապես ադրբեջանցիներով բնակեցված Շուշիի շրջանի գործկոմի նախագահի ստորագրությունը:

ՆԱԽԻՋԵՎԱՆԸ ԲՈՂՈՔՈՒՄ Է ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԴԵՄ

Մարտի 11. - Նախիջեւանի ինքնավար հանրապետության միջնակարգ դպրոցների մի քանի հազար ուսուցիչներ միտինգ անցկացրեցին ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի շենքի առաջ ի պաշտպանություն իրենց սոցիալական եւ տնտեսական պահանջների: Միտինգը ավելի ուշ վերածվեց համաքաղաքային: Մասնակիցները պահանջում էին հրավիրել Նախիջեւանի ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիսի արտահերթ գումարում, ուր պետք է չեղյալ հայտարարվի մարտի 17-ին հանրաքվե անցկացնելու մասին Ադրբեջանի հանրապետության օրենքը:

Մարտի 12. - Նախիջեւանում հայտարարվեց մարտի 14-ին ինքնավար հանրապետության Գերագույն մեջլիս հրավիրելու որոշումը: